

ԵՐԿՐԱՐՐԱԹՆԵՐ ԷԻՆ, ԱՐԴՅՈՎ, ՈՒԱ, ՈՒԵ, ՈՒԻ... ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՐԱՐԱՐՈՒՄ

Հ. Գ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Դասական հայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրությանը ներվիրված մի շարք աշխատություններում և դրանց հետևողությամբ նաև հայ բարբառների մենագրական համարյա բոլոր ուսումնասիրություններում, գրաբարի երկբարբառների շարքում գրվում և քննվում են նաև ու-ով սկսվող կազմությունները, որոնք, մեր կարծիքով, բնավ էլ երկբարբառներ չեն:

Այդ շարքում, օրինակ, հանդուցյալ ակադեմիկոս Հ. Աճառյանը դնում է ուա, ուե, ուէ, ուի, ուո, ուու¹ այսինքն՝ ու-ի և հայերենի մյուս ձայնավորների (բացառությամբ ը-ի) բոլոր ղուգորդումները: Սրանց վերաբերյալ Աճառյանը անում է հետևյալ դիտողությունը. «Առանձնապես նկատողության արժանի են ու ձայնավորով կազմված երկբարբառները. ասոնք վանկատության մեջ կհաշվեն առանձին-առանձին. այսպես՝ ուա երկու վանկ էր... հմմտ. լուայ, լուաւ, լուաւ կամ տուայ, տուաւ, տուաւ և այլն, բոլորն ալ առանց ե հավելվածի: Երկվանկ ըլլալու էին նաև ուի, ուէ, ուե, ուու, որոնց համար դժբախտաբար նման օրինակներ չունինք»²: Ինչպես կարելի է նկատել, իր այս դիտողությամբ Հ. Աճառյանը փաստորեն բացառում է ու-ով կազմությունների երկբարբառ լինելը: Եվ իսկապես. եթե ուա, ուե, ուի... երկվանկ էին, ապա երկբարբառներ չէին, որովհետև երկբարբառների տարբերությունը ձայնավորների այլ կարգի միացություններից կայանում է հենց նրանում, որ նրանք արտասանական մի միասնությամբ հանդես են գալիս մի վանկում և չեն բաշխվում տարբեր վանկերի վրա: Այստեղ կա հակասություն, որի մասին պրոֆ. էդ. Աղայանը իր «Գրաբարի քերականություն» աշխատության Ա գրքում գրում է. «...Երկբարբառները հենց այն դեպքում են լինում, երբ մեկ վանկի մեջ միանում են երկու ձայնավորներ, որոնցից մեկը կորցնում է իր վանկարար դերը: Այս սկզբունքով դասական հայերենի երկբարբառներից յուրաքանչյուրը մեկ վանկ պետք է կազմեր: Այս բանն ապացուցելու համար Հ. Աճառյանը բերում է մի հիանալի տվյալ. «Կեամ բայը, — գրում է նա, — կատարյալի մեջ կուաա կեցի, կեցեւ, կեաց կամ եկեաց՝ ե հավելվածով, ասկե կերեա, որ միավանկ է և հետևաբար եա երկբարբառն ալ միավանկ է: Ուրիշ երկբարբառներու համար հարմարավոր օրինակներ չկան, բայց այս միակ օրինակը ինքնին բավական է խնդրին լուծման համար»: Այս հիանալի ապացույցից հետո, ի հակառակն դատելով, վարմանալիորեն պնդում է, թե ուա, ուի, ուե երկու վանկ են կազմել. բերելով նույնպիսի փաստարկ դրանց համար էլ»³: Ասենք, որ Աճառյանից բերված հատվածում խոսքը վերաբերում է միայն եա երկբարբառին և ոչ ուա, ուե, ուի և այլ կապակցություններին, որոնց մեջ, ինչպես տեսանք վերը, Աճառյանը դիտում է երկու վանկ: Իրոք, կաբելի է վարմանալ, թե ինչու Աճառյանը

¹ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1926, էջ 314:

² Նույն տեղում, էջ 335:

³ էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Ա, 1964, էջ 129—130:

ու-ով կապակցությունները երկվանկ դիտելուց հետո էլ դրանք համարում է երկբարբառներ: Այս հակասությունը Առաջինի մոտ առաջանում է թերևս այն պատճառով, որ նա, հիմնվելով դրություն ձևերի վրա, երկբարբառներ է տեսնում բոլոր այն դեպքերում, երբ գրության մեջ զուգորդվում են ձայնավոր արտահայտող երկու տառեր:

Նկատենք, որ Աղայանը թեև ու-ով կազմություններից երկբարբառ է դրտում միայն ուա, ուե, ուի, ուո զուգորդումները, բայց այնուամենայնիվ լրացուցիչ փաստեր է բերում դրանց երկվանկային բնույթի համար: Չնայած որ այս դեպքում նա նախահավելվածը հաստատուն կովան չի համարում, քանի որ, ինչպես ինքն է ասում՝ «տաց ձևն էլ նախահավելված չի ստանում, բայց չենք կարող ասել, թե դա երկու վանկից է բաղկացած: Ավելի կարևոր է այն, որ լուսնամ ապառնիում ունի լուսացու, և քուլի՝ քուեսցի, այսինքն՝ կրում են ց>ս հնչյունափոխությունը, որին միավանկ բառերը երբեք չեն ենթարկվում: Վերջապես դրանց ավելանում է նաև լուաց ձևն առանց հավելվածի: Սրանցից ամեն մեկն առանձին վերցրած չի կարող դիտվել անառարկելի, բայց բոլորը միանալով արդեն զորավոր կովան են դառնում»⁴:

Ամբողջ հակասությունն առաջանում է այն բանի հետևանքով, որ ուա, ուե, ուի զուգորդումները չեն պարփակվում մի վանկի սահմաններում, և նրանցով ձևավորված հիմքերը չեն պահպանում միավանկության հատկանիշները (նախահավելվածի բացակայություն, ց>ս հնչյունափոխություն): Եվ բնական է, որ այս հակասությունը հաղթահարելու համար կա՛մ պետք է ընդունել, որ դրանք երկբարբառներ չէին, կա՛մ էլ, եթե երկբարբառներ էին, ապա պետք է հիմնավորել, թե ինչու՞ այդ երկբարբառները պարունակող ձևերը չունեն միավանկ հիմքերին հատուկ նախահավելվածը և ցց կապակցությունը: Աղայանը ընտրում է երկրորդը և տալիս հետևյալ բացատրությունը. «Ստեղծանք բայի կատարյալն է ստեղծ, որ երկվանկ է և նախահավելված չպիտի ստանար, բայց ունենք եստեղծ ձևը, այդպես էլ սպանանեմ-եսպան, սրանք այնքան տարածվել են, որ հետագայում դիտվել են իբրև ճիշտ ձևեր և նույնիսկ Հ. Աճառյանը գրում է, թե «մենք վարժված ենք ասելու եսպան, եստեղծ»: Բայց ինչպես վերը ասել ենք, Մեյեն և նույն ինքն Աճառյանը ապացույցել են, որ հին և ճիշտ են ստեղծ (= ըստեղծ), սպան (= ըսպան) ձևերը: Սխալ ձևերն առաջացել ու տարածվել են այն բանի հետևանքով, որ ուշ դարերում այդ բառերի սկզբում ր կա՛մ չի արտասանվել, կա՛մ չափազանց թուլցիկ, աննկատելի արտասանություն է ունեցել, ինչպես այժմ էլ: Արդեն դասակարգված գրաբարում էլ կապակցված խոսքում նախորդող բառի վերջահանգ ձայնավորից հետո այդ ր-ն չէր արտասանվում (հմմտ. օր. արդելականի ձևերը. մի՛ սպանանեք են): Արդ, եթե այս դեպքում հետին դարերի արտասանության պատճառով առաջացած սխալն ընդհանրացել է, ապա նույնը կարող ենք ասել նաև լուսաց, տուաբ, քուեսցի և նրման ձևերի մասին: Այստեղ հավան(ական)ությունն ավելի շատ է այն պատճառով, որ ձայնավորից առաջ ու>ս փոփոխությունն սկսվել էր արդեն հինգերորդ դարում, թերևս հենց Մեսրոպի ժամանակ էլ՝ ժողովրդական լեզվում, դրա համար իբրև ապացույց կարելի էր հիշել Փարպեցու մոտ հիշատակված Վրիլ անձնանվան Վրվալ սեռականը Կանոնագրում, ինչպես և՛ Վրվալը իգական անունը: Մենք կարծում ենք, ուրեմն, որ դեռևս հինգերորդ դարում կամ զոհեն

⁴ Նույն տեղում, էջ 130:

վեցերորդ դարի սկզբներում ու>վ փոփոխությունը բավական տարածված է եղել. սրա հետևանքով էլ տուաւ, լուաւ, բուեսցի և նման ձևերն սկսել էին արտասանել տքվավ, լրվավ, բքվեսցի և այլն, որպես երկվանկ բառեր: Քանի որ այդ ժամանակ գրաբարի խոնարհումը դեռևս շատ կենսունակ էր իր նախահավելվածի և գ>ս հնչյունափոխության տեսակետից, ապա նախնական ետուալ, ելուաց, լուացցուփ, բուեսցի ձևերը վերածվեցին տուալ, լուաց, լուացցուփ, բուեսցի ձևերին, ինչպես որ հակառակ ընթացքով սսլան, ստեղծ ձևերն էլ դարձան եսսլան, եստեղծ և իրենք մոռացության մատնվեցին⁵:

Ինչպես կարելի է դիտել այս ընդարձակ մեջբերումից, այստեղ ու-ու՛ սկսվող կապակցությունների երկբարբառներ լինելու հարցը լուծվում է ոչ այնքան փաստական նյութի քննությամբ, այլ որքան տրամաբանական եղրահանդումների հիմքի վրա, անալոգիական կաղմությունների հաշվառմամբ, որոնք իրականում հակասում են իրերի փաստական դրույթներ:

Ու-ով կաղմությունների, ինչպես և առհասարակ բոլոր երկբարբառների համար կարևոր է այն, որ նրանք անալոգիաներ են հանդես պիտի գան մի վանկում, հակառակ դեպքում, այսինքն՝ երկբարբառների բաղադրիչները տարբեր վանկերի վրա բաշխվելու դեպքում, դրանք դադարում են երկբարբառ լինելուց և վերածվում են ձայնավորական կապակցությունների: Եվ քանի որ գրաբարի երկբարբառավոր հիմքերի միավանկությունը որոշելու հիմնական միջոցը համարվում է բայերի անցյալ կատարյալի և ապառնիի որոշ ձևերում նախահավելված ընդունելը և ցց զուգորդումը, բնենք ուրեմն այդ երևույթներն ըստ էության:

Վաղուց ապացուցված և քեբականության մեջ արձանագրված իրողություն է, որ նախահավելվածը հանդես է գալիս միայն միավանկ բայաձևերում, այն էլ միայն անցյալ կատարյալի և նրա հիմքից կաղմվող ապառնիի որոշ ձևերում: Ըստ որում, եթե բացառենք անկանոն կոչված բայերը, ապա նախահավելվածի ամենաընդհանրական և հետևողական կիրառությունը անցյալ կատարյալի եղակի երրորդ դեմքում է: Նկատված է նաև, որ այդ դեմքում նախահավելվածը պատմական շրջանի սկզբում (հայերենի դասական շրջանում) հատուկ է եղել միայն բաղաձայնով սկսվող բայերին, այն դեպքում, երբ ձայնավորով սկսվող միավանկ հիմքերը գուրկ են եղել դրանից (ենթադրվում է, որ այստեղ հավելվածը չի դրվել հորանջից խուսափելու համար):

Ավելորդ չենք համարում այստեղ հրապարակել այս հարցի վերաբերյալ մի քանի վիճակագրական տվյալներ: Այսպես. Հին կտակարանի Մնունդք բաժնի քննության ընթացքում պարզվեց, որ այստեղ օգտագործված են անցյալ կատարյալի եղակի երրորդ դեմքի 350 միավանկ ձևեր, որոնցից 236-ը բաղաձայնավոր սկիզբ ունեն և անալոգիաներ են հանդես են գալիս միայն նախահավելվածով. այդ բայաձևերն են (նվաղող հաճախականությամբ). ետես-62, եկեաց-39, եմուտ-24, եհան-23, եգիտ-16, ելաց-11, եհար-9, եպագ-8, եբաց-7, եհարց-7, եցուց-5, եբեր-4, եկեր-4, եհաս-4, եբող-4, եկաց-3, ելից-3, եբարձ-3, եբարձ-1. և ոչ մեկը՝ առանց հավելվածի: Նույն թվից 114-ը սկսվում են ձայնավորով և երբեք չունեն նախահավելված. առ-45, ել-38, արկ-10, ած-8, էջ-6, անց-5, արբ-2 և ոչ մի թալաձև՝ նախահավելվածով: Ըստ որում, այստեղ հաշվի չեն առնված տալ և զնել բայերը, որոնք իրենց դասական ձևերով որևէ

⁵ Նույն տեղում, էջ 131—132:

կասկած չեն հարուցում: Նույն բանը տեսնում ենք նաև Եղնիկի «Եղծում»։ Այս-տեղ օգտագործված է 73 միավանկ ձև. այդ թվից 46-ը բաղաձայնավոր սկիզբ ունեն և բոլորն էլ կիրառված են նախահավելվածով. այսպես՝ ետես-7, եհան-6, եկաց-6, եթող-6, եմուտ-4, եբարծ-3, եհար-3, եհաս-2, եկեր-2, եցոյց-2, եմոյծ-1, ելից-1, ելոյծ-1, եհարց-1, եգիտ-1։ Ձայնավորական սկիզբով օգտագործված է 27 բայածև, դրանցից 26-ը՝ առանց նախահավելվածի. այսպես՝ ած-8, արկ-6, առ-5, ել-4, եղծ-2, անց-1 և միայն մեկը՝ էառ, նախահավելվածով։ Կասկած չի կարող, որ այս մի ձևում էլ է-ն հետագա ընդօրինակությունների ժամանակ է ավելացել։

Այսպիսով, շնայած այն բանին, որ քերականությունների մեջ ընդունված է ասել, թե անցյալ կատարյալի 3-րդ դեմքի միավանկ ձևը կարող է լինել և՛ հավելվածով, և՛ առանց հավելվածի, սակայն իրականում հավելվածը հատուկ է եղել բաղաձայնով սկսվող միավանկ հիմքերին։ Հ. Աճառյանը նույնպես նշում է. «Հետին ժամանակի կազմություններ են էած, էօծ ձևերը և Ավետարանի հին ձևագրերը այսպիսի ձև չեն ձևանալում»⁶։

Ձայնավորասկիզբ հիմքերում է հավելվածի կիրառությունը անալոգիական կազմություն լինելով հանդերձ, միաժամանակ նպատակ է ունեցել ըստ ձևի տարբերակել անցյալ կատարյալի եղակի երրորդ դեմքը բուն հրամայականի եղակի ձևից, քանի որ դրանք նույնաձև էին։

Ավելի բարդ է նախահավելվածի կիրառությունը դեռևս ու տալ բայերի անցյալ կատարյալում։ Այսպես օրինակ՝ դեռևս բայի անցյալ կատարյալի հարա-ցություն ունենք՝

եղի	եղաք
եղիր (եղեր)	եղիք
եղ	եղին

Եթե նկատի ունենանք, որ կանոնավոր բայերի անցյալ կատարյալի միավանկ երրորդ դեմքը և հրամայական եղանակի եղակի ձևը համընկնում են, և այդ հիմքից են կազմվում մյուս դիմավոր ձևերը կատարյալում, ապա այստեղ սպասելի էր դիւ հիմքը, որից վերջավորությունների հավելմամբ պիտի ունենայինք.

դրի (<*դիրի)	դրաք (<*դիրաք)
դրիր (<*դիրիր)	դրիք (<*դիրիր)
եղիր	դրին (<*դիրին)

Մի համակարգ, որը խորթ չէ հայերենին և արձանագրվում է արդեն միջին հայերենի շրջանում։ Սակայն դրաբարյան հարացույցում դիւ հիմքը մաշված է այն աստիճան, որ նրանից մնացել է միայն ղ բաղաձայնը, որը ոչ միայն առանձին հանդես գալ չի կարող, այլ նույնիսկ դիմային վերջավորությունների հավելմամբ էլ՝ միավանկ լինելուց բացի՝ կարող է շփոթվել այլ բառաձևերի հետ (դի, դիր, դին և այլն)։ Ուստի և այստեղ նախահավելվածը ավելանում

⁶ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, Ա, էջ 277—278։

է ոչ միայն միավանկութիւնը կանխելու համար (որովհետեւ 3-րդ դեմքը նախահաղելովածով էլ մնում է միավանկ՝ եդ), այլեւ այլ նման հնչյունախմբերով կազմված բառերից սահմանազատելու համար:

Քննարկվող հարցի տեսակետից ավելի ակնառու օրինակ է տսլիս տալ բայի անցյալ կատարյալի հարացույցը, որտեղ ունենք.

Լտու	տուաք
Ետուր	Ետուք
Ետ	Ետուն

Եթե մի կողմ թողնենք այս հարացույցում հանդես եկող միավորների քննութիւնը, որոնք կարող են մեկնաբանվել դեռ բայի օրինակով, ապա այստեղ նախահաղելովածը առկա է ոչ բոլոր ձևերում: Նախահաղելովածը հանդես է գալիս այն բոլոր դեմքերում, որտեղ առանց հաղելովածի բառաձևը միավանկ է: Հոգնակի առաջին դեմքի տուալ ձևում հաղելովածը բացակայում է երկվանկութիւնը և ոչ այլ պատճառով: Եթե այդ ձևում ուա կապակցութիւնը երկբարբառ լիներ, ապա բառաձևը ամբողջությամբ միավանկ գիտակցվելով հարացույցի մյուս անդամների նման կունենար նախահաղելոված: Ենթադրվում է, որ այն նախապես ունեցել է (*ետուաք), սակայն հետագայում, երբ կատարվել է ու>վ հնչյունափոխութիւնը և բառաձևը գիտակցվել երկվանկ, ընկել է: Այդ ենթադրութիւնը չի հիմնավորվում դասական հայերենի և հին ձեռագրերի ոչ մի օրինակով: Նման մի հարացույցում, որտեղ վեց անդամներից հինգը ունեն նախահաղելոված, վեցերորդը հենց մյուսների ազդեցությամբ չպետք է կորցնէր: Նույնիսկ Լթե ընդունելու լինենք այդ ենթադրութիւնը, ապա մատենագրութիւն մեջ այդ նախնական հաղելովածավոր կիրառութիւն ինչ-որ հետքեր պետք է որ պահպանված լինէին: Սակայն այդ հետքերը չկան ոչ միայն տուալ բառաձևում, այլև նույն տիպի երկբարբառով կազմված այլ ձևերում, ինչպես տուայ, տուալ, տուաւ, տուան, լուայ, լուար, լուաւ, լուաք, լուան և այլն: Վերջապես հաշվի պետք է առնել, որ գրաբարի բայի անցյալ կատարյալի և ապառնիի բացարձակապես բոլոր միավանկ ձևերը ունեն նախահաղելոված, հետևաբար վերը նշված ուա կապակցությամբ ձևերը միավանկ լինելու դեպքում բացառութիւն կազմել չէին կարող: Միակ բացառութիւնը տաց ապառնիի ձևն է, որի նախահաղելոված չունենալը ևս ունի իր բացատրութիւնը: Աճառյանը այդ մասին գրում է. «Եվ եթե ապառնիում էլ է դրվում (ե հաղելովածը— Հ. Մ.), այդ նրանից է, որ մեր ապառնին կատարյալից է շինվում ընդհանրապես, իսկ երբ ապառնին անկախ է, թեև միավանկ, բայց չունի ե նախահաղելովածը, ինչպես՝ տաց (ոչ թե *ետաց)»⁷: Եվ իսկապես, տալ բայի ապառնին ընդհանուր օրինաչափությամբ սպասելի էր *ետուց, սակայն այն կազմրված է այլ հիմքից, որի պատճառով էլ զուրկ է նախահաղելովածից:

Ուով կապակցութիւնների մի վանկում հանդես գալու օգտին չեն խոսում նաև այնպիսի բայաձևեր, ինչպիսիք են, մի կողմից, լուաց, նուաց և, մյուս կողմից, քուեսցի, լուեսցի, շուեսցի և այս տիպի բառերը: Առաջինները միավանկ լինելու դեպքում անպայմանորեն պետք է ունենային նախահաղելոված, ինչպես այդ հատուկ է բաղաձայնով սկսվող միավանկ հիմքերին: Երկրորդներում

⁷ Նույն տեղում, էջ 278:

ունենք զ՝ս հնչյունափոխությունը, որը հատուկ չէ միավանկ հիմքերին: Եվ եթե ենթադրվում է, որ դրանք նախապես եղել են *ելուաց, *ենուաց, *թուեցցի, լուացցի, *շուեցցի ձևերով և հետագայում սրբագրվել են, ապա դժվար է համոզվել, թե այդ սրբագրությունը կատարված լինի այնպիսի հետևողականությամբ և մաքրությամբ, որ հնից ոչ մի հետք մնացած չլինի, այն դեպքում երբ ձևագրերի արտագրությունների ժամանակ գրիչները ամենայն բարեխղճությամբ էին վերարտագրում հին ձևագրերը՝ պահպանելով հին ուղղագրության բոլոր մանրամասները: Այս տեսակետից սպանանեմ և ստեղծանեմ բայերի սպան և ստեղծ ձևերին զուգահեռ հետին դարերում ստեղծված եսպան և եստեղծ գրությունները զորավոր կովան լինել չեն կարող: Դասական գրաբարի մատենագրությանը հատուկ են ոչ թե սխալ, այլ ճիշտ ձևերը: Զեռագրերում սպրդած հատուկ կենտ վրիպակները դալիս են ոչ թե դասական շրջանից, այլ հետագա բնորոշակություններից, երբ գրաբարը այլևս դադարում է խոսակցական լեզու լինելուց: Այսպես օրինակ՝ Հին կտակարանի Ծնունդը բաժնում չորսական անգամ օգտագործված սպան և ստեղծ ձևերից և ոչ մեկը չունի նախահավելված: Եզնիկի «Եղծում» սպան-ը օգտագործված է հինգ անգամ՝ նույնպես առանց նախահավելվածի, ստեղծ-ը չորս անգամ, որից միայն մեկը եստեղծ ձևով, որը, ինչ խոսք, հետագա դարերում կատարված նորամուծություն է: Սակայն այստեղ կարևորն այն է, որ եթե հետագա դարերում առաջացած սխալ ձևերը այս կամ այն չափով սկսել են նաև մուտք գործել հին մատենագրության մեջ՝ բնորոշակությունների ժամանակ, ապա դրանք լրիվ կերպով չեն փոխարինել հին ձևերին և մոռացության չեն մատնել հին ձևերը, այլ զուգահեռաբար գործածվել են հին ձևերի կողքին: Այս իսկ տեսակետից բնական էր սպասել, որ եթե լուաբ, տուաբ, լուաց, նուաց, լուացի, բուեցի և այլ նման ձևերը նախապես ունեցել են միավանկ հիմքերին հատուկ հավելված և ցց զուգորդություն, և հետագայում սխալ ձևերը աստիճանաբար դուրս են մղել նախնական ձևերին և մոռացության մատնել, ապա դրանք պետք է ունենային զուգահեռ չիրառություններ, ինչպես սպան և եսպան, ստեղծ և եստեղծ ձևերում է: Բայց բանի որ նման զուգագրություններ չկան, և ամբողջ մատենագրությանը տալիս է միայն մի կարգի գրության ձևեր, ապա պետք է ընդունել, որ լուաբ, տուաբ, լուաց, նուաց, լուացի, բուեցի և նման այլ բառաձևերի հիմքերը միավանկ չլին հենց սկզբից, հետևաբար և ու-ով և այլ ձայնավորներով կազմվող կապակցությունները երկրաբառներ չէին:

Վերը շարադրվածին պետք է ավելացնել նաև հետևյալը: Հայտնի է, որ Լ-ն շեշտադրվածությունից հնչյունափոխվում է Լ-ի՝ երկրաբառակերպ ձայնավորից վերածվելով պարզ ձայնավորի: Անկախ այն բանից, ու՛ է կապակցությունը դիտում ենք երկրաբառ, թե եռաբառ, նրա մեջ կատարվում է այն նույն փոփոխությունը, ինչ որ հատուկ է Լ-հնչյունին. այսպես՝ նուլբ-նուլբել, պատուլբ-պատուլբել: Այս փոփոխությունը նույն երևույթն է, ինչ որ արձանագրվում է Լ ունեցող այլ բառերում: Ինչպես սլբ-սլբուլ, սլբել, հանդլ-հանդլիս և այլ բառերում: Հայտնի է նաև, որ երկրաբառները և եռաբառերները, երբ ենթարկվում են հնչյունափոխության, փոխում են ոչ թե իրենց բաղադրիչներից մեկը, այլ որպես միասնական արտասանությամբ հանդես եկող վանկարար հնչյուններ՝ փոխվում են մի նոր որակի վանկարարի (հմմտ. գոյն-գունաւոր, թոյն-թունաւոր, կեանք-կենաց, սենեակ-սենեկի, քրիստոնեայ-քրիստոնէի, միջօրեայ-միջօրէ և այլն) և բանի որ ու՛ է կապակցության մեջ փո-

փոխությունն ենթարկվում է միայն նրա բաղադրիչներից մեկը, այն էլ է-ն իր ընդհանուր օրինաչափությամբ, հետևաբար և այդ կապակցությունը երկբարբառ կամ եռաբարբառ չէ:

Դիտենք նաև քուել, չուել, խուել բայերի որոշ թեքված ձևերը: Նախ ասենք, որ բերված ուղիղ ձևերում ոչ ոք չի կարող կասկածել, թե ել-ը դերբայական վերջավորությունն չէ՝ նման է լծորդության բոլոր բայերին: Որպես անորոշ դերբայի ձևաբանական ցուցիչ ել-ը, անշուշտ, բերված բայերում ունի արտասանական նույն որակը, ինչ որ նույն վերջավորությամբ մյուս բայերում: Եթե այդպես է, ապա այդ վերջավորության ե-ն արմատական ու-ի հետ երկբարբառ չի կազմում, բանի որ հակառակ դեպքում նա կկորցնեք ձևաբանական իր ֆունկցիան: Այս բանը ապացուցվում է նաև այդ նույն բայերի թեքված ձևերի քրենությունում: Վերջենք օրինակ քուել բայի ներկան՝ քուի, անցյալ անկատարը՝ քուլը, անցյալ կատարյալը՝ քուեաց, ապառնին՝ քուեսցի: Արդ, սրանց համեմատությունից երևում է, որ նույն բառի բերականական տարբեր ձևերում ունենք ուն, ուի, ուլ երկբարբառները և ուեա եռաբարբառը: Սակայն ինչպես կարելի է նկատել, այս փոփոխությունները կապված են ոչ թե շեշտի հետ, այլ զուտ ձևաբանական են, պայմանավորված հայերենի խոնարհման համակարգի ընդհանուր առանձնահատկություններով: Այսպես՝ քուել ձևում ե-ն լծորդության ձայնավորն է և լ-ի հետ կազմում է անորոշի դերբայական ցուցիչը, ինչպես առհասարակ է լծորդության բայերում: Թուի բառաձևում ի-ն խոնարհիչ ձայնավորն է, որը այս դեպքում հանդես է գալիս նաև որպես երրորդ դեմքի ցուցիչ՝ ներկա ժամանակի հարաբերությամբ, ինչպես՝ խոսի, նստի և նման այլ բայերում: Նույնը կարելի է ասել նաև քուլը անցյալ անկատարի մասին. որտեղ է-ը որոշակիորեն առանձնանում է որպես 3-րդ դեմքի ցուցիչ որոշակի ժամանակի հարաբերությամբ, ինչպես գրի, խօսի, նստի և այլ նման բայերում: Այս համեմատությունից երևում է, որ նշված բառաձևերում քու-ն առանձնանում է որպես արմատական հիմք, ինչպես աս-, խօս-, սի- հիմքերը ասել, խօսել, սիրել բայերում, և այդ արմատական հիմքին է, որին միանում են ձևաբանական ցուցիչները ընդհանուր հիմունքներով: Նույն ձևով բացատրվում է նաև քուեաց բառաձևը, որտեղ եաց-ը նույնն է, ինչ որ սիրեաց, գրեաց բառաձևերում. և հնչյունափոխվում է նույն օրինաչափությամբ՝ եա-ն դարձնելով ե՝ քուեաց-քուեսցի: Ասենք նաև, որ եթե քուեաց, չուեաց, խուեաց ձևերում վանկարար հնչյունները պարզելու համար հիմնվենք միայն դրության ձևի վրա, ապա պետք է գրաբարում ընդունենք նաև ուեա եռաբարբառի գոյությունը: Այդ հիմունքով գրաբարում կարելի է արձանագրել նաև քառաբարբառի գոյություն. ինչպես օրինակ՝ պրտուեայ բառաձևը (Աստվածաշնչում՝ «առ մայրն նորա տապանակ պրտուեայ, և ծնիեաց զնա կպրաձիթով» Ելք, Բ, 3): Սակայն այստեղ առաջին օրինակում իրականում ունենք երկբարբառ եա, իսկ երկրորդում՝ եայ եռաբարբառ, որոնք և հնչյունափոխվում են իրենց հատուկ փոփոխությամբ (քուեաց-քուեսցի, պրտուեայ-պրտուլի):

Ու-ով սկսվող ձայնավորային կապակցությունների երկբարբառներ չլինելը ապացուցելի է նաև մի այլ տեսանկյունից: Հայտնի է, որ երկբարբառների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հանդես գալով մի վանկում, նրանք իրենց պատմական զարգացման ընթացքում փոխվել են պարզ ձայնավորների: Չկա հայերենի մի բարբառ, որտեղ հին երկբարբառները պարզ-

ված չլինեն. ամենուրեք այժմ նրանց փոխարեն ունենք պարզ հնչյուններ. այսպես՝ ալ-ի փոխարեն այժմ ունենք ա կամ է, իւ-ի փոխարեն՝ ու(ու) կամ ի, եա-ի փոխարեն՝ է կամ ա, աւ-ի փոխարեն՝ օ կամ ու (զարգացած օ-ից) և այլն: Հակառակ երևույթը՝ երկբարբառների փոխարեն երկհնչյուններ, բարբառները չունեն, եթե դրանք գրական փոխառություններ չեն: Եթե բարբառներում դրանց փոխարեն կան երկբարբառներ (օրինակ եա>իա), ապա դրանք ավելի հետին գոյացություններ են՝ պարզ ձայնավորներից առաջացած: Երկբարբառների դիմաց երկհնչյուններ ունեն միայն գրական լեզուները: Այստեղ էլ երկհնչյունային արտահայտությունը ոչ թե բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխություն է, այլ երկբարբառների վերանալուց հետո՝ դրանց գրաիկն արտահայտության հիման վրա գրական լեզվում ձևավորված արտասանություն (եա=յա, իւ=իւ=յու, ալ=ալ, ոլ=ուլ և այլն): Այս իսկ տեսակետից, եթե ուա, ուե, ուի և այլ կապակցությունները եղած լինեին երկբարբառներ, հայերենի բարբառներում պետք է ենթարկվեին երկբարբառների պատասխան փոփոխության ընդհանուր օրինաչափությանը, այն է՝ պետք է պարզվեին ու վերածվեին պարզ ձայնավորների: Սակայն ինչպես գիտենք, իրականում այդպես չի եղել: Ամենուրեք այդ կապակցությունների մեջ ու-ն փոխվել է Վ-ի, իսկ նրան հաջորդող ձայնավորները ենթարկվել են տվյալ բարբառում այդ ձայնավորներին հատուկ փոփոխություններին: Ըստ որում, չափադանց կարևոր է նաև այն, որ եթե երկբարբառներից առաջացած երկհնչյունները գրական լեզվում պահպանում են իրենց միավանկությունը (մի վանկում հանդես գալու հատկությունը), ապա ու-ով կապակցություններից առաջացած երկհնչյունները ինչպես գրական լեզվում, այնպես և բարբառներում երկվանկ են, այսինքն բաշխվում են տարբեր վանկերում: Այդ բանը որոշակիորեն երևում է նման կապակցություններ պարունակող բառերի հոգնակի ձևերի համեմատությունից: Ժամանակակից հայերենը և նրա բարբառները տարբերակում են միավանկ և բազմավանկ բառերի հոգնակիի կազմության միջոցները: Քանի որ սալլ, կեանք>կյանք, սիւն>սյուն, գոլն>գուլն և նման բառերում երկհնչյուն վանկարարները պահպանում են բառի միավանկությունը, դրանք ստանում են եւ հոգնակերտը՝ սալլեւ, կյանքեւ, սյունեւ, գուլնեւ և այլն: Սակայն այդպես չեն ու-ով կազմված երկհնչյուններով բառերը, սրանք բազմավանկ բառերի նման ստանում են ներ (բարբառներում նաև այլ տիպի) հոգնակերտը. ինչպես՝ լուացք>լվացք-լվացքներ, նուէր>նվեր-նվերներ, սուին>սվին-սվիններ և այլն: Պարզ է, որ եթե ուա, ուե, ուի կապակցությունները նախապես միավանկ, այսինքն՝ երկբարբառներ լինեին, ապա նախ բարբառներում պետք է որ վերածված լինեին պարզ ձայնավորների, և երկրորդ, գրական լեզվում էլ մյուս կարգի երկհնչյունների նման մի վանկում պետք է հանդես գային և պիտի ընդունեին եւ հոգնակերտը: Իսկ քանի որ այդպես չէ, ապա հիշյալ կապակցությունները պարբարում երկբարբառներ չէին:

Թվում է, թե այս բոլոր փաստարկները միասին վերցրած համողիչ կրուկաններ են հաստատապես ասելու, որ ու-ի և մի այլ ձայնավորի ղուգորդությունը կազմված միացությունները պարբարում երկբարբառներ չէին:

Իսկ թե այդ կապակցությունների մեջ ինչ որակ է ունեցել ու-ն, դա արդեն այլ հարց է, որ այստեղ չենք քննի: Միայն մի բան որոշակիորեն կարելի է ասել, այդ կապակցությունները կազմում էին երկու վանկ, այսինքն՝ բաշխվում էին տարբեր վանկերի վրա: Չուել, քուել, նուէր, լուաց, սուին և նման ձևերում

ու-ն ուներ ձայնավորի արժեք և այդ բառերը վանկատվում էին շու-ել, թու-ել, նու-էր, լու-աց, սու-ին մասերի: Եթե հայերենի գրի առման շրջանում ու-ն ձայնավորից առաջ փոխված լիներ v-ի (ինչպես հայերենի արդի վիճակում է, երբ վանկատումը կատարվում է այլ սկզբունքով՝ շը-վել, քը-վել, նը-վեր, լը-վաց, սը-վին), ապա երկու ձայնավորների միջև v-ի ուղղագրական կանոնի համաձայն այդ բառերը կգրվեին շրւել, քրւել, նրւէր, լրւաց, սրւին և այլն, արտահայտության ձևեր, որոնք հանգիպում են ավելի ուշ շրջանի միջնագրւյան ձևադրերում ու վիմական արձանագրութիւններում, երբ ու-ն ձայնավորից առաջ հնչունափոխվել էր v-ի:

БЫЛИ ЛИ ДИФТОНГАМИ СОЧЕТАНИЯ *ուա, ուե, ուի...* В ГРАБАРЕ?

Օ. Ժ. ՄՐԱԴՅԱՆ

(Ր Ե Յ Ո Մ Ե)

В лингвистической литературе по грабару и почти во всех монографических исследованиях по современным армянским диалектам древнеармянские сочетания *ուա, ուե, ուի* ...считаются дифтонгами. Рассматривая графемные пары *ուա, ուե, ուի* в ряде позиций и учитывая общие закономерности исторического развития старых дифтонгов, автор статьи приходит к заключению, что они не являлись дифтонгами, а выступали как сочетания двух фонем, компоненты которых относились к разным слогам.